



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱԾ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԸ ԷՆՍԻՆՈՅԻ  
Ս. ՆԱՐԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

ԹԵՍԻՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ՄԵԶ  
ՀՈԳԵՅԱՆԳԻՒՏ ՀՕՄ-Ի ՆՆՁԵՑԵԱԼՆԵՐՈՒՄ ՀԱՄԱՐ

Կիրակի, 22 Փետրուարին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Սարտիրոսեան պիտի հանդիսապետ Էնսինոյի Ս. Նահատակաց Եկեղեցւոյ Ս. Պատարագին:

Նոյն օրը, ընդառաջելով ՀՕՄի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան խնդրանքին, Առաջնորդ Սրբազան Հօր տնօրինումով, մեր Թեմի բոլոր Եկեղեցիներուն մեջ յաւարտ Ս. Պատարագի հոգեհանգստեան յատուկ արարողութիւն պիտի կատարուի ՀՕՄի ննչեցեալ ծառայողներու հոգիներուն համար:

Նշենք, որ Արեւմտեան մեր Թեմին մեջ, տարիներու աւանդութիւն է խունկ ու աղօթջով յիշատակել Յայ Օգնութեան Միութեան ննչեցեալները:

Նաեւ, ի պատասխան ՀՕՄի խնդրանքին, մեր Եկեղեցիներուն մեջ նուիրահաւաք տեղի պիտի ունենայ ի նպաստ ՀՕՄին: Այս արշաւը մաս կը կազմէ ՀՕՄի 100ամեակին նուիրուած աշխատանքներուն:

Ծանօթ է, որ այս մեծ կազմակերպութիւնը յառաջիկայ տարի, 2010ին, պիտի տուն իր հիմնադրութեան 100ամեակը:

Նուիրահաւաքը առիթ մը պիտի ըլլայ մեր ժողովուրդին՝ գործնապես մասնակից ըլլալու ՀՕՄի գործին, որ տասնամեակներ շարունակ տարուած է ժողովրդային լայն գօրակցութեամբ:

Այս առիթով, մեր Եկեղեցիներուն մեջ պիտի ընթերցուի Առաջնորդ Սրբազանին կոչը:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT  
HOLY MARTYRS CHURCH**

**REQUIEM SERVICE FOR A.R.S. MEMBERS IN ALL  
PRELACY CHURCHES**

On Sunday, February 22<sup>nd</sup>, the Eve of Great Lent, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at Holy Martyrs Church in Encino.

Upon the request of the Regional Executive of the A.R.S. and the ordinance of the Prelate, each year special requiem services are offered in Prelacy Churches for departed members of the Armenian Relief Society. This year, requiem service will be offered on Sunday, February 22<sup>nd</sup>, in all churches following Divine Liturgy.

Also on this day, funds will be raised in all churches to benefit the A.R.S. as they prepare to celebrate their centennial next year. The Prelate's call to support this effort will also be read.

\*\*\*

## **ՄԵԾ ՊԱՅՔԻ ՃՐՁԱՆԻՆ, ԱՐԵՒԱԳԱԼԻ ԵՒ ՀԱԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ՄԵԶ**

Երկուշաբթի, 23 Փետրուարին, կը սկսի Ս. Յարութեան տօնը կանխող Մեծ Պահոց քառասնօրեայ շրջանը:

Մեծ Պահոց շրջանին, թեմիս բոլոր Եկեղեցիներուն մէջ տեղի պիտի ունենան Արեւագալի եւ Հակումի արարողութիւններ, Զորեցաբթի եւ Ուրբաթ օրերուն:

Առաջնորդ Սրբազն Յայրը Զորեցաբթի, Փետրուար 25-ին, պիտի հանդիսապետէ Ենսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ Արեւագալի առաջին արարողութեան: Ժամերգութեան ներկայ պիտի ըլլան Ֆերահեան Ազգ. Վարժարանի աշակերտները:

Արարողութենեն ետք, Եկեղեցւոյ կից «Տիգրանեան» սրահին մէջ տեղի պիտի ունենայ ճաշի հանդիպում, կազմակերպութեամբ ՀՕՄ-ի Ենսինոյի «Անահիտ» Մասնաճիւղին:

Առաջնորդ Սրբազն Յայրը ներկայ պիտի ըլլայ հանդիպումին եւ պիտի փոխանցէ իր օրինութեան խօսքը:

Յայտնենք որ Զորեցաբթի, Մարտ 4-ին, Առաջնորդ Սրբազն Յայրը պիտի հանդիսապետէ Կլենտելի Ս. Կատուածածին Եկեղեցւոյ Արեւագալի ժամերգութեան:

Արարողութենեն ետք, Եկեղեցւոյ սրահին մէջ տեղի պիտի ունենայ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Մարմինին Մեծ Պահօք աւանդական ճաշկերոյթը, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազն Յօր:

Յաւելեալ տեղեկութեանց համար հեռաձայնել Ազգային Առաջնորդարան:

## **START OF LENTEN SUNRISE AND VESPER SERVICES**

Monday, February 23<sup>rd</sup> is the first day of Great Lent. During this period, Sunrise and Vesper Services will be offered in all Prelacy Churches on Wednesdays and Fridays.

On Wednesday, February 25<sup>th</sup>, the Prelate will preside over the first Sunrise Service at Holy Martyrs Church. Ferrahian School students will participate in the service, which will be followed by a luncheon at "Dikranian"

Hall organized by the A.R.S. "Anahid" Chapter, during which the Prelate will convey his blessings.

On Wednesday, March 4<sup>th</sup>, the Prelate will preside over Sunrise Service at St. Mary's Church which will be followed by the traditional Lenten lunch organized by the Prelacy Ladies Auxiliary at "Armenak Der Bedrossian" Hall.

\*\*\*

## **«ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ԲԱՐԵԿԱՄՍԵՐ» ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ՏԱՐԵԿԱԾ ԶԵՌՆԱՐԿԸ**

Ազգային Առաջնորդարանի հովանիկին տակ գործող «Նոր Զուղայի Բարեկամսեր» յանձնախումբի տարեկան մշակութային ձեռևարկը տեղի պիտի ունենայ Շաբաթ, Փետրուար 21-ի երեկոյեան, Կլենտէյլի Royal Palace սրահին մեջ:

Տարազահանդեսը կը վայելէ Առաջնորդ Սրբազան Հօր հովանաւորութիւնը: Առաջնորդ Սրբազան Ներկայ պիտի ըլլայ հանդիսութեան, ընկերակցութեամբ Կլենտէյլի U. Կստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արք. S. Կոմիտաս Զիլյ. Թորոսեանի:

## **PRELATE TO ATTEND “FRIENDS OF NEW JULFA” ANNUAL EVENT**

Under the auspices of the Prelate, on the evening of Saturday, February 21<sup>st</sup>, the "Friends of New Julfa" Committee will hold its annual event at Royal Palace in Glendale.

The Prelate will attend the event, accompanied by Rev. Fr. Gomidas Torossian, pastor of St. Mary's Church.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆԸ ՆԵՐԿԱՅ ՊԻՏԻ ԸԼԼԱՅ ՀԱՄԱՉԳԱՅԻՆԻ ՃՐՁԱՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԲԱՑՈՒՄԻՆ**

Առաջնորդ Սրբազան Ուրբաթ, 20 Փետրուարի երեկոյեան, Ներկայ պիտի ըլլայ Համազգայինի Արեւմտեան Ամերիկայի շրջանի 15րդ Ներկայացուցական ժողովի պաշտօնական բացումին:

Ժողովը տեղի պիտի ունենայ ՀՕՄԻ Շրջ. Վարչութեան կեդրոնատեղին մեջ, Կլենտէյլ: Առաջնորդ Սրբազանը այս առիթով պիտի ուղղէ իր պատգամը, վեր առնելով Համազգայինի դերն ու համազգայնականներու ծառայութիւնը՝ մեր մշակոյթին ու հասարակական կեանքին մեջ:

## **PRELATE TO PARTICIPATE IN THE OPENING OF THE HAMAZKAYIN REPRESENTATIVES ASSEMBLY**

On Friday, February 20<sup>th</sup>, the official opening of the Hamazkayin Western Region

15<sup>th</sup> Representatives Assembly will take place at the A.R.S. Regional Executive headquarters in Glendale.

The Prelate will be present at the opening and will convey his message to the members.

\*\*\*

## **Ի ՊԱՏԻՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԳԼԽԱԼՈՐ ՀԵՂՊԱՏՈՍԻՆ**

Յիսգշաբթի, 19 Փետրուարի երեկոյեան, Հ.Յ.Դ. Արեւմտեան Միացեալ Սահակագներու Կեղրոնական Կոմիտեն պաշտօնական հիլընկալութիւն մը կազմակերպած էր Կլենտելի իր կեղրոնատեղիին մեջ, ի պատիւ Յայատանի նոր գլխաւոր հիլպատոս Գրիգոր Յովհաննիսիսի, անոր պաշտօնավարութեան սկսումին առիթով։

Յիլընկալութեան ներկայ եղաւ Թեմիս Կրօնական ժողովի ատենապետ Գերա. S. Միռոն Ծ. Վրդ. Ազնիկեան, իբրեւ ներկայացուցիչը Առաջնորդ Սրբազնին։ Ներկայ էին նաև Ազգ. Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան եւ անդամներէն Տիար Կարօ Եշկիեան, ապա նաև հայկական միութեանց ու կազմակերպութեանց ներկայացուցիչներ։

## **PRELATE REPRESENTED AT A.R.F RECEPTION FOR THE NEW CONSUL GENERAL OF ARMENIA**

On the evening of Thursday, February 19<sup>th</sup>, the Central Committee of the A.R.F. Western Region had organized a welcoming reception for the newly appointed Consul General of Armenia the Honorable Grigor Hovhannisyan at their headquarters in Glendale.

Prelacy Religious Council Chair Very Rev. Fr. Muron Aznikian represented the Prelate at the reception. Executive Council Chair Dr.Garo Agopian and member Mr. Garo Eshgian were also in attendance, along with a number of representatives from sister organizations.

\*\*\*

## **Ա. ՎԱՐԴԱՎԱՆՑ ՏՕՆԻ ՆՃՈՒՄ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ՄԵԶ**

Յիսգշաբթի, Փետրուար 19-ին, Ս. Վարդանանց Զօրավարաց տօնին առթիւ, առաւոտեան ժամը 11-ին, Կլենտելի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մեջ, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազն Յօր եւ մասնակցութեամբ

հոգեւորականաց դասուն, հանդիսաւոր ժամերգութիւն կատարուեցաւ Ս. Կարդանանց Զօրավարաց Նահատակութեան յիշատակին:

Քարոզեց քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Գերապ. Տ. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան:



Նոյն օրը, երեկոյեան ժամը 6:30-ին, նախագահութեամբ Առաջնորդ Սրբազնին ու մասնակցութեամբ թեմիս հոգեւորականաց դասուն, Եսահնոյի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ մեջ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ, տօնախմբելու Սրբոց Ղետոնդեանց եւ Կարդանանց յիշատակը:

Պատարագեց եւ քարոզեց քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն՝ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիւմեան:

Ան խօսեցաւ հոգեւորականաց համագումարին քննարկուած հարցերուն մասին, ապա նաեւ անդադարձաւ Կարդանանց հերոսամարտի կարեւորութեան ու անոր պատգամին այժմեականութեան մասին:

## FEAST OF STS. VARTANANK COMMEMORATED



On Thursday, February 19<sup>th</sup>, the Prelate and clergy order gathered for morning services and Divine Liturgy in commemoration of the Feast of Sts. Vartanank. Morning services took place at St. Mary's Church in Glendale. The sermon was delivered by Very Rev. Fr. Muron Aznikian.

In the evening Divine Liturgy was celebrated by Very Rev. Fr. Barthev Gulumian who also delivered the sermon, in which he spoke of the historical significance and timeless message of Vartanants.

\*\*\*

## ԱՄԵՐԻԿԱՅԻ ԵՐԵՔ ԹԵՄԵՐՈՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ԵՌՈՐԵԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ՝ Ս. ՂԵՒՇՆԵԱՆՑ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ

Փեսսիլվանիա Նահանգի Ֆիլատելֆիա քաղաքի Հայց. Առաքելական Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին այս շաբաթակիզիքին ժամադրավայրը

Եղաւ Յիւսիսային Ամերիկայի երեք թեմերու հոգեւորականաց դասերուն, որոնք Երկուշաբթի, 16 Փետրուարին մինչեւ Չորեքշաբթի, 18 Փետրուար ունեցան Ս. Ղետնդեանց տօնին առիթով աւանդական համագումարը, հիւրընկալութեամբ Արեւելեան թեմին: Ծանօթ է որ թեմերուն մեջ տարեկան հերթականութեամբ կազմակերպուող այս համագումարը երկու տարին անգամ մը կը համախմբէ երեք թեմերու հոգեւորականաց դասերը: Նախորդը հիւրընկալուած էր մեր թեմին կողմէ:



Հոգեւորականաց համագումարը տեղի ունեցաւ նախագահութեամբ երեք թեմակալ Առաջնորդներուն՝ Բարձր. S. Օշական Արք. Զօլոյեանի (Արեւելեան թեմ), Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի (Արեւմտեան թեմ) եւ Բարձր. S. Խաժակ Արք. Յակոբեանի (Զանատայի թեմ):

Նկատի ունենալով, որ Մեծի Տան Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս 2009 տարին հռչակած է Երիտասարդութեան Տարի, համագումարը իբրեւ գլխաւոր նիւթ որդեգրած էր «Գիտակից Երիտասարդը հիմք՝ Եկեղեցւոյ ու ազգի կենսունակութեան» թևաբանը:

Եռօրեայ համագումարը ունեցաւ քննարկումներու եւ հոգեւոր խորհրդանութիւններու նիստեր: Երեքշաբթի, 17 Փետրուարին, Սրբոց Ղետնդեանց Զահանայից տօնին առիթով, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մեջ Ս. եւ անմահ Պատարագ մատուցուեցաւ: Նշենք նաեւ, որ Հոգեւորականաց դասերը այցելութիւն մը տուին Հ.Ս.Ը.Ս.-ի հիմնադիրներն՝ Տիգրաս Ալ. Քիևյանի շիրմին:

Յամագումարը փակուեցաւ Չորեքշաբթի, 18 Փետրուարին, ու հոգեւորականները վերադարձան իրենց շրջանները, Յիւսիսային Ա. Վարդանանց յիշատակը:

## JOINT GHEVONTIANTS CLERGY CONFERENCE OF THE NORTH AMERICAN PRELACIES CONCLUDES

On Monday, February 16<sup>th</sup>, the biennial joint Ghevontiants clergy conference of the three North American Prelacies convened at St. Gregory the Illuminator Church in Philadelphia. The conference was hosted by the Eastern Prelacy and presided over by H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern United States, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and H.E. Archbishop Khajag Hagopian, Prelate of Canada.



Given that H.H. Catholicos Aram I has proclaimed 2009 the Year of the Youth, the theme of the conference was “The Informed Youth – The Livelihood of our Church and Nation”.

The three day conference included discussion and analysis of issues of mutual concern to the three Prelacies, spiritual meditation and reflection, and lecture presentations. In addition, the Feast of St. Ghevontians was commemorated with Divine Liturgy on Tuesday, February 17<sup>th</sup>, at St. Gregory the Illuminator Church. Clergy members also paid a visit to the gravesite of one of the founders of Homenetmen Archpriest Fr. Dickran Khoyan.

The Prelate and clergy returned to Los Angeles on Wednesday evening.

\*\*\*